ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան **«30» նոյեմբերի 2022թ.**

2022 թվականի նոյեմբերի 29-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության (այսուհետ՝ Տեսչական մարմնի) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) հերթական նիստը:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում.

2. Տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրի հաստատում.

Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Գ. Խաչատրյան

3. Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատում.

4. Տեսչական մարմնի 2022 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում.

5. Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.

Զեկուցող՝ Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Գ.Գիլոյան

Քվեարկությանը մասնակցում էին՝

Ա. Փամբուխչյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (խորհրդի նախագահ)
Ա.Դանիելյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Գ. Սանոսյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ն. Տերյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Ղուլարյան	Քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար
Տ. Քեյան	«ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ
Տ. Բաբայան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Դ. Սողոմոնյան	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Ս. Հովսեփյան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Ա.Հարությունյան	– ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 10 կողմ, 0 դեմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հաստատել Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը.

2. Հաստատել Տեսչական մարմնի 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը.

3. Հաստատել Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը.

4. Հաստատել Տեսչական մարմնի 2022 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագիծը.

5. Հավանություն տալ Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2022 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվությանը.

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Ա. Փամբուխչյան**

Կառավարման խորհուրդի քարտուղար՝ **Ն. Մելիքսեթյան**